

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՅ ԴԵՊՔ

Շագինապետ Վրայ ևս խաբարեալագործութիւն :

Երկուսն ճամբաներուն վրայ շոգեկառքերը որ-
չափ ալ շուտ քալեն՝ ճամբորդներուն մեծ նեղ-
սրբառութեանը պատճառ կ'ըլլայ աս բանս որ
հասարակ կառքերէն շոգեկառք մտնելու և բեռ-
ները վերցնելու ու դնելու համար շատ ատեն
կ'անցնի : Մօտերս Գաղղիայի մէջ վարպետ հը-
նարք մը գտեր են որ աս բաներուս համար գրե-
թէ ամենեւին ստեն չանցնի : Հասարակ կառքերը
(որ իրենց լեզուովը փիլիթանս կ'ըսուին) սովորա-
բար քսան հոգիի չափ կ'առնեն . ասոնց անիւնե-
րուն վրայի կողմը տեսակ մը մեծ պտուտակ (պօ-
ճաւադապ) հաստատուած է որ շոգեկառքին իջևա-
նը հասածնուն պէս՝ ան պտուտակը կը գարձենեն ,
ու հասարակ կառքերուն մէջի սնտուկը ճամբորդ-
ներով ու բեռներով մէկտեղ վեր կ'ելնէ , ու շո-
գեկառքերէն մէկուն վրայ կը փոխադրուի , որ մաս-
նաւոր կերպով մը աս բանիս յարմար շինած է :
Շոգեկառքը կենալուն պէս՝ նոյնպիսի գործիքով
շուտ մը բոլոր ճամբորդներն ու բեռները կը վեր-
նան ու հասարակ կառքերու վրայ կ'անցնին կ'եր-
թան իրենց տեղը :

Մեռելի ուրախութիւն :

ՍԿՈՎԵՍՏԻ մէջ քանի մը շաբաթ առաջ այլևայլ
գեղեր մեծ շփոթութիւն մը ելեր է . վասն զի ա-
մենքն ալ կը տեսնեն եղեր որ գիշերները ճերմակ
մարդ մը վեր վար կը պտըտի , կ'ոռնայ կը կան-
չուրուտէ , ու աշուրներէն կրակ կը ցատէ : Խեղճ
գեղացիները աս տեսնելով իրար կ'անցնին կը սար-
սափին . բայց տէրութեան մարդիկներէն մէկը
միտքը կը դնէ որ ասիկայ անշուշտ պարզ հոգի չէ ,
միս ու ոսկոր է : Մէկ իրիկուն մը սիրտ կ'ընէ՝ ու-
րուականին վրայ կը վազէ . անիկայ կը ձգէ կը փախ-
չի , բայց հոն պահուրտած սրտոտ գեղացիի մը
ձեռքը կ'իյնայ կը բռնուի . տեսնեն որ ան ուրուա-
կան կարծուածը 70 տարեկան ծեր մըն է որ կէս
մը խենթեցած՝ գիշերները կը պտըտի եղեր , ըսե-
լով թէ երկընքէն ձայն մը լսեր է որ ան կերպով
ապաշխարէ իր մեղքերը : Կ'առնեն մէկէն կը տա-
նին ու խենթանոցը կը դնեն :

Գայլու հէք խոռոչ խորիճ :

ՆԱՓՈԼԻԻ երկիրը Անիէլլոյ Ափոսթոլիքոյ անու-
նով 25 տարուան պատկերահան մը գիշեր ատեն
Մերքաթոյ գեղէն Փիրոյ գեղը երթալու ժամա-
նակը , անօթի գայլ մը վրան կը վազէ : Տղան որ
արդէն ուժով է եղեր , աս վասնզը տեսնելուն
պէս՝ աւելի սիրտ կ'առնէ , ու կրակ գարձած կը
սկսի կատաղի գազանին հետ կռուրթիլ . մէկըմէկ
գետնէ գետնի զարկած ատեննին՝ երկուքը մէկէն

բլէն վար կը գլորին : Տղան երկու ձեռքովը գայ-
լին վզէն բռնած , կ'ուզէ զանիկայ խղճել . իսկ
գայլը՝ մէկ դիէն կրակոտ աշուրները գուրս ցցուած՝
խղճուկ ձայնով կ'ոռնայ , մէկ դիէն ալ ճանկերովն
ու ակուններովն խեղճ տղուն հագուստն ու մար-
մինը կը ճանկըռտէ ու կը պատռէ : Խեղճը երկու
իրեք անգամ գազանին ձեռքէն կը փախչի , բայց
գայլը նորէն վրան կը հասնի : Աստուած կուտայ որ
վերջապէս կարիճ երիտասարդը գայլին վրայ կ'ի-
նայ , մէկէն իր սուր դանակը կը հանէ ու գայլին
վիզը կը խոթէ : Գայլը արիւնջուայ՝ ոռնալով խռ-
կալով կը սաստկի կը մնայ : Բայց երիտասարդը վա-
խէն չհաւտար թէ մեռած ըլլայ , ու այնպէս եր-
կար ատեն վրան նստած կը կենայ :

Տէրութիւնը աս բանս իմանալուն պէս՝ երիտա-
սարդին առատ թոշակ կը կապէ : Բայց մեղք որ
ան խեղճը չկրնար իր քաջութեանը վարձքին վրայ
ուրախանալ : Վասն զի թէպէտ և բժիշկներուն
ձեռքովը իր վերքերը կը բժշկուին , բայց միշտ վախ-
կայ եղեր որ չըլլայ թէ կատուած գայլին ակունե-
րուն թոյնը անոր մարմնոյն մէջ մնացած ըլլայ ու
արեանը հետ խառնուելով՝ ջրաՎախութեան եր-
թայ ծայրը . ինչպէս որ եղաւ այ : Վասն զի յիսու-
ու երկու օրէն ետեւ սկսեր են հիւանդութեան
նշանները երևնալ , և ջրաՎախութեան կատաղու-
թիւնը երթալով սաստկացեր է . բժիշկներուն ը-
րած դեղերը ամենեւին բանի չեն եկած , խեղճ
երիտասարդը աս տարի փետրուարի 27ին վախճա-
ներ է . և բոլոր ան գաւառին բնակիչքը անոր գե-
ռահասակ պատանեկութիւնը , սրտոտութիւնն ու
գրգռողութիւնը յիշելով ողբացեր են զինքը :

Ողջ ողջ Բաղուած Ժողով :

ՄԱՃԱՌՍՏԱՆԻ Շէնից քաղաքը մօտերս հա-
րուատ մարդ մը թաղեր են որ դեռ մեռած չեն եղեր :
Զարմանալին աս է որ խեղճ մարդը վերջի հիւան-
դութեանը մէջ տեսնելով որ ատեն ատեն սաստկի
թմրութեան մը մէջ կ'իյնայ , կը վախնայ եղեր որ
չըլլայ թէ յանկարծ ան միջոցին տանին թաղէն
զինքը : Մեռելաթաղիները մեռելը գերեզմանն ի-
ջեցնելու ատեն մէկ երկու անգամ պզտիկ շարժ-
մունք մը տեսեր են վրան , բայց կամ անհոգու-
թեամբ և կամ անգթութեամբ փոյթ չեն ըրած .
թաղեր են : Երկու օրէն ետքը հազիւ ասոնց խղճը
մտանքը կ'արթննայ ու կը պատմեն գիպուածը :
Շուտ մը կ'երթան ուրիշները , գերեզմանն ու տը-
տուկը կը բանան , տեսնեն որ մեռելը դարձեր երե-
սին վրայ ընկեր է , ու թշուառ մարդը իր մէկ ուսը
կրծեր է եղեր : Աս սոսկալի դիպուածն ալ իրատ
ըլլայ անոնց որ մեռելնին շուտ մը թաղելու ետեւ
կ'ըլլան , ու չեն նայիր որ գոնէ 24 ժամ անթաղ
մնայ . ինչպէս որ Եւրոպա օրէնք է որ երկու օր
երկու գիշեր կը պահեն մեռելը :